

ՄԱՍ 4. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄ

2010-2012 թվականների ընթացքում տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների զարգացման ուղղությամբ աշխատանքներն իրականացվել են Խորհրդի կողմից 2003 թվականին ընդունված «Միասնական տեղեկատվական վիճակագրական համակարգի զարգացման հայեցակարգ»-ին համապատասխան:

Ծառայության կառուցվածքային ստորաբաժանումների գործող համակարգչային տեղային ցանցը միավորել է տեխնիկական պահանջներին համապատասխանող 200 համակարգիչ, գործել է «ԷնԷսԷսԴոմեյն» դոմենային միջավայր, որը կառավարվել է «Վինդոուս-2000» սերվերի միջոցով: Այնապահովել է կենտրոնացված կառավարմամբ հուսալի միջավայր՝ ներառյալ հակավիրուսային պաշտպանությունը: Տեխնիկական աջակցություն ցուցաբերելու նպատակով 2010-2012 թվականներին այցելություններ են կատարվել Ծառայության աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումներ, որտեղ մասնավորապես կատարվել են հետևյալ աշխատանքները՝ Ծառայության մարզային գործակալություններում արդիականացվել են ծրագրային փաթեթները, թարմացվել են հակավիրուսային ծրագրերը, կարգավորվել են տեղային ցանցերը և մոդեմային կապը՝ համապատասխան գործակալությունների տարածքային ստորաբաժանումների, ինչպես նաև Ծառայության աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների հետ: Ծառայության աշխատակազմի Երևանի քաղաքային գործակալությունում ներդրվել է նոր համակարգչային ցանց, գործող բոլոր համակարգիչները միացվել են համացանցին և տեղակայվել է հակավիրուսային ծրագրեր:

«Արմենիահինֆո» ծրագրի շրջանակներում Ծառայության աշխատակազմի մի շարք կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներ համալրվել են նոր համակարգիչներով և անհրաժեշտ տեխնիկական միջոցներով, կատարվել են դրանց տեղակայման և ծրագրերով համալրման աշխատանքներ: Շարունակվել է վիճակագրական և վարչական տվյալների արխիվացումը: Համակարգչային սարքավորումների անխափան աշխատանքն ապահովելու նպատակով կատարվել են ստուգումներ, ախտորոշումներ և սարքավորումների վերանորոգում: Ծառայության աշխատակազմի առանձնացված ստորաբաժանում հանդիսացող մարդահամարի վարչությունում 2010-2012 թվականների ընթացքում ընդլայնվել և կարգավորվել է տեղային ցանցը և տեղակայվել են անհրաժեշտ ծրագրային փաթեթներ և կենտրոնացված կառավարումով հակավիրուսային ծրագրեր:

Հաշվետու ժամանակահատվածում ծառայության ինտերնետային կայքէջում տեղադրվել է 670 վիճակագրական նյութ (այդ թվում՝ 2010 թվականին՝ 170, 2011 թվականին՝ 201, 2012 թվականին՝ 299): Շահագործվել է թվով 76 տեղեկատվական շտեմարան: Հաշվի առնելով, որ 2011 թվականից սկզբնական տեղեկատվությունը հավաքագրվել է ամսական (դիսկրետ) կտրվածքով, կատարվել են փոփոխություններ 8 տվյալների բազաներում: Շարունակվել է դասակարգիչների տվյալների հիմնապաշարի վարումը և ընդլայնումը:

Աշխատանքներ են տարվել տվյալների հիմնապաշարը տեղեկատվությամբ լրացնող և ժամանակագրական շարքերի ստացումն ապահովող ծրագրերի մշակման-նախագծման ուղղությամբ: Շարունակվել են Հազարամյակի զարգացման նպատակների (ՀՁՆ)՝ Հայաստանի ցուցանիշների տվյալների բազայի «Armenia_MDG_NSS2010»՝ հայերեն և անգլերեն տարբերակների արդիականացման աշխատանքները: Այս բազան տեղակայվել է www.devInfo.info կայքէջում:

2010 թվականի մայիս 26-ին ստեղծվել է www.armdevInfo.am կայքէջը: ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի, Բնակչության հիմնադրամի և Զարգացման ծրագրի հետ համատեղ կազմակերպվել է «Հայաստանի ՀՁՆ ցուցանիշների տվյալների բազայի հիմնական բնութագրիչների և www.armdevInfo.am կայքէջի» շնորհանդեսը, որի ընթացքում ներկայացվել է գեկույց: Ծառայության աշխատակիցների համար ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի հետ համատեղ կազմակերպվել է ուսուցողական սեմինար՝ «ԴեվիՆֆո 6.0. Սպառող և տվյալների բազայի կառավարման մոդուլները» (DevInfo 6.0 User/Database Administration Modules) խորագրով: Ստեղծվել է ձեռնարկ «Արմենիահինֆո» - ՏՎՅԱԼՆԵՐԻ ԲԱԶԱ ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ: DevInfo 6.0 տվյալների բազաների համակարգի օգտագործմամբ 2011 թվականի ընթացքում շարունակվել են ՀՁՆ-ի՝ Հայաստանի ցուցանիշների տվյալների բազայի՝ հայերեն և անգլերեն տարբերակների արդիականացման աշխատանքները: Մուտքագրվել են 2005-2010 թվականների ցուցանիշները: ՄԱԿ-ի Մանկական և Բնակչության հիմնադրամների և ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի աջակցությամբ 2011 թվականի նոյեմբերի 22-ին՝ Դիլիջան քաղաքում, իսկ դեկտեմբերի 8-ին և դեկտեմբերի 15-ին Ծառայությունում, կազմակերպվել է «Արմենիահինֆո» տվյալների բազայի կառավարման համակարգի (www.armdevinfo.am) շնորհանդես-գեկույց: Իրականացվել են www.armdevinfo.am կայքի վարման և արդիականացման աշխատանքները:

«Արմենիահինֆո» բազան ընդլայնվել է «Հիմնական վիճակագրական տվյալներ» ցուցանիշներով՝ ըստ հանրապետության, ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի, մուտքագրվել են 2005-2011 թվականների ցուցանիշները, տեղակայվել է նոր տեղեկատվական բազա՝ Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը: 2012 թվականի վիճակագրական-վերլուծական գեկույցում ներկայացված տվյալների հիման վրա, «Արմենիահինֆո» բազան համալրվել է ՀՁՆ ցուցանիշների 2011 թվականի տվյալներով: «Աջակցություն Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությանը Թվինինգ ծրագրի միջոցով» ԵՄ Թվինինգ ծրագրի շրջանակում ստեղծվել է ArmStatBank տվյալների բազան, որը 2012 թվականի սեպտեմբերի 14-ին հասանելի է դարձել հանրությանը www.armstatbank.am կայքէջում: 2012 թվականի տարեվերջի դրությամբ կայքէջում տեղադրվել են թվով 50 վիճակագրական աղյուսակներ (բազաներ)՝ PX-Web ծրագրով, PC Axis ձևաչափով, ինչպես նաև վիճակագրական տեղեկատվություն սպառողի համար մատչելի MS Excel, xml կամ այլ ձևաչափերով: Այն հնարավորություն է ընձեռել ներբեռնել տվյալներն աղյուսակային, գծապատկերային, հետազայում նաև՝ քարտեզային պատկերավորմամբ: